

բոհար ալ կ'ըսուի, և ան փոփոխութեա
պատճառն աս է :

Ծուլիոսկեսարին կարգաւորութեն
ետև՝ այսպէս կերենար թէ տարին
ամենաձիշդ է . բայց ինչպէս վերը ը-
սինք , Ծուլիոս կեսարին դրած տա-
րին քանի մը վայրկեան աւելի էր ,
այսինքն 11', 24'', 30''' . ասոնք 128
տարիէն ետև իրարու վրայ զարնելով
մէկ օր մը կ'ընեն . անանկ որ Վրիս-
տոսէ 1577 տարի ետքը՝ 13 օր աւելի
էր տարին : Ի՞այց որովհետև այլ-
այլ ժամանակ տարուան մէջէն իրեք
օր դուրս ձգուեր էր , ասով տարբե-
րութիւնը տասը օր միայն մնաց : Վրի-
գոր ժդ հռոմայ քահանայապետը
1582էն ուրիշ իմաստնոց օգնութեը
որոշեց ու հրաման հանեցորան տարին
հոկտեմբեր ամսուն 5 գրելու տեղը՝
հոկտեմբերի 15 գրեն : Ի՞ս կարգաւո-
րութենս հետեւցան բոլոր հռոմէա-
կան դաւանանք ունեցողները . ասան-
կով տարին կարգի եկաւ , ու դար-
նանային գիշերահաւասարը մարտի
20էն սկսաւ հանդիպիլ , որ առաջ
10էն կը հանդիպէր : Ի՞այց որով-
հետև աս հաշուով ալ 100 տարուան
մէջ 25 օրնահանջ ընելով գրեթէ 19
ժամկ'աւելնայ , որ 400 տարիէն ետ-
քը 76 ժամ կ'ընէ , պաալը աս բանիս
դիմացն ալ առնելու համար՝ որոշեց
որ ամէն իրեք դարի գլուխը (որ չորս
չորս համբելով նահանջ կուգայ) ,
հասարակ տարի սեպուի , ու միայն
չորրորդը նահանջ ըլլայ . ասանկով
1700է , 1800է , և 1900է հասարակ
տարիներ պիտի ըլլային , ու 1600է և
2000է նահանջ : Ի՞յսչափ կարգերէն
կանոններէն ետքը դեռ ձար չեղաւ՝
մանր անձգութիւնները չիրցան վեր-
ցնել աս հաշիւններուն մէջէն , բայց
ատենով կրնայ ըլլալ որ վերնան :

Երբոր Վրիգոր ժդ , աս կերպով
տոմարը կարգի կը դնէր , արևմտեան
եկեղեցականներուն մէջ շատ տա-
րածայնութիւններ կային . ուստի հռո-
մայ աթոռին ծուռ նայողները ընդու-
նեցան աս նոր կարգաւորութիւր , և

իրենց սխալէն ետ չկեցան . հապա
Ծուլեան տոմարին հետևելով , նախ
10 օրը պահեցին , ետքը 1700էն ալ
նահանջ ընելով 11 օր ետ մնացին :
Ի՞ս հաշուի տարբերութիւնները թէ
տօներու և թէ քաղաքական գործո-
ղութեանց այնչափ շփոթութեան
պատճառ եղան որ հակառակողնե-
րուն մեծ մասը վերջապէս խոնարհե-
ցան Վրիգորեան տոմարին հետեւ-
լու : Ի՞սանկով նորազանդները 1700էն
Վրիգորեան տոմարն ընդունեցան ,
և փետրուարի 18էն ետքը , 11 օր
ձգեցին , ու մարտի 1e անցան : Ի՞նգ-
ղիացիք 1752էն ընդունեցան նոր կար-
գաւորութիւնը . Տանիմարքացիք և
Շուետները 1753էն : Միայն Ուու-
ները Վրիգորեան տոմարը ինչուան
հիմա յանձն չառին : Հոյներն ու մեր
ազգն ալ՝ գրեթէ Ուուսաց հետեւ-
լով աս բանիս մէջ Ծուլեան տոմա-
րով կ'երթան , որ հին բոհար ալ կ'ը-
սուի . և որովհետև աս տոմարին հե-
տեւողները 1800էն ալ նահանջ ըրին ,
հիմա իրենց տարին նոր տոմարէն 12
օր ետք է . աս պատճառաւ օրացոյց-
ներու մէջ ամէն ամսուն առջի օրը
Կատինացւոց նոյն ամսուն 13 է :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

‘Ե՞՞ Պարի :

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ մէջ սովորութիւն
մը կայ որ տարւոյն վերջի գիշերը՝
մէկտեղ կը ժողվին բարեկամներ ու
ազգականներ , և իրենց գլխէն ան-
ցած բաները կամ հին աւանդութիւ-
ները կը պատմեն իրարու ինչուան կէս
գիշեր . մէյմ’ալ երբոր զարնէ ան
ահաւոր ժամը՝ որով հին տարին ան-
ցեալ ժամանակին ծովը կ'ընկղմի , նոր
տարին ալապագայ ժամանակէն դուրս
կ'ելլէ , ամէնքը խօսքերնին կը կտրէն ,
ու մէկմէկու նոր տարի չնորհաւորե-

լովկերգեն աս Ա ոս բանաստեղծին շինած երգը .

Բոլորեցաւ ամս՚ի յետին հունչ ժամուն .
Հապա առէք բաժակ, եղբարք միրասուն,
Ահա թըռեաւ բարենըշան մեր տարի ,
Անց խառնեցաւ յիւր ընկերացն ՚ի շարի :
Վահի մեզ ած նա վիշտ և խինդ յեղափոխ,
Եւ արդ ՚ի սպառ ըզմեղ ելք և եթող .
Ըզբերկանաց և ըզաւոց յիշատակ
Զայս խուն նըլսար ետ մեզ յընթացսըն երագ :
Յանցաւ ՚ի ծիր ըզրջեալ մաշի ժամանակ,
Նախ ՚ի մանկան՝ ապա ծերոյ ՚ի գիմակ
Որ ալէզարդ կըթու նըլալ և անզօր
Խըր ուրուական սահի զիլրմաւ գըլսակոր,
Եւ այն ինչ մեք ձեռըն ձըդեալ կեղակարծ
Արձանագրել փութամբ աղօս ինչ քերդած ,
Զգեղ ըզպասակ ըզիրելիս և զարժաթ
Սուեալ գընայ յանդարձ ուղին մեզ անյայտ :
Մէք ՚ի հերուն սերկեան աւուր ՚ի հանդէս
Ակումբ առեալ յերդ և ՚ի բաննը պէսսպէս
Բերկրապատար և ցընծալիցք հրճուէսպ .
Ո՞ւր այն ժամու բարեկամաց հանդանակ :
Յոլովք ՚ի խորս արդ խաղացեալ տապանին ,
Զանդորրաւէտ նընթէն յաւերժ քուն յետին .
Օն կանգնեսցին ամեթ արձանք ՚ի սրբտի ,
Եւ քաղցր անուանքն անդէն անջինջ արպացի :
Յամս ՚ի նորում ՞ո գիտէ զհունձըն մահու ,
Որ երեկ ցանդ յեղակարծ ՚ի պահու :
Չիցէ տեսեալ բիւր սազարթունս հազմավար
Ի գարնայնի թափեալ յանկարծ վայր ՚ի վայր ...
Սակայն ՚ի մեզ ցող կաթեսցէ ջերմ ական
Խանդաղակաթ սըրտիւ մերձեալ ՚ի դամբան
Այն որ վերջին յերախանէս մընալով
Ըզբուրից կափուսցէ զաքս լալով :
Միշտ անխըռով ըզւարթադէմ հոգեկիր ,
Յառաջ խաղայ զիօնն ՚ի կենաց հասեալ ծիր .
Յանուրիս ախորժ թուի նըմարել նա ըզմահ ,
Խոնջ պարտասաւէլ ՚ի կենցաղոյս գիւրասահ
Կողմնի հանդարտ , զարտևաննունս տալ ՚ի նինջ ,
Եւ յանկարծուստ Տէր լըս ՚ի նա կաթեալ ջինջ
Հրաւեր կարդայ գալ ՚ի խորոց տապանին
Յերանաւէտ կեանս ընտրելոց աշխարհին :
Արդ ծն և մեք գնասցուք , եղբարք , անվեհեր ,
Թէպէտ թողուլ զիրեար հասցէ ՚ի չուս մեր :
Բարի է մահ արդարոյ քաղցր և հեշտին ,
Միայն պատրաստ կացցուք առ ժամն այն յետին .
Գնասցուք յուսով զիտ կոչովին , բարեկամք ,
Եւ զուարձախառն երգոց կըրինեալ միշտ ըզվանդ
Արշալուսին նորոյ տըւեալ սերտ ողջոյն ,
Վար ըստասցուք մեզ յայսմէտակ լաւագոյն :

Գեղեցիկ խորհրդածութիներով
ու խորունկ և չշմարիտ իմաստնե-
րով գրած է նաև լամարթին գաղ-
ղիացի բանաստեղծը յաջորդ քեր-
թուածը որ նոր տարուան վրայ շա-
րադրածին մէկ կտորն է .

Տէր , դու ես հայր ժամանակաց և իշխան ,
Ամբ բիւրաւորք առ քե մի օր են միայն .
Դու ՚ի ծայրից բոյոց լերանց մըշտընջեան
Դիտես զաւուրս որ սըրացան և որ գան .
Ի մի նըկատ մինչև եղեալ տեսանես
Թէ զոր պըտուղ դասու հանդերձեալ երկնէ մեզ .
Ազաշէմտէր , զինչ ինձ ձեռք կեղակարծ
Այս ածէ ամ՝ յոյն և երկիւղ մահացուաց .
Յիմոց աւուրց տարիս յանկուած յաւելեալ
Իցէ հիւսիւք սիրոյ նորհաց յօրինեալ :
Համբուրեցից զայն իբր ըզքու ինչ պարգև ,
Թէ գուեցից և ի բաց գնասալիր , անց զինւ :
Այլք ՚ի տարեաց անցին ՚ի գիրկս ակաղձուն
Կուտեալ ինձ տենչ զեղը , արտասուս , անձկութէ ,
Խաբեպատիր սին երեսոյթս ուրուական ,
Խինդ միօրեայ , հրաժեշտ անդարձ անդարման ,
Եւ գառըն բերա՞ որոց կեղեք աղազուն
Մնան ՚ի սըրախս իբր ըզփոշի անկայուն :
Զոր չունեինն ես ՚ի նոցունց խընդրէի ,
Եւ ցանդ զաւանի ՚ի վախճանի կրկնէի :
Եւ թմէկալայ ակն ՚ի դարուց աշխարհիս ,
Հիմն ՚ի յաւազ արկի և սերմն ՚ի յալիս :
Արդ ժամէ տէր , զի զգաստացեալ և իմ սիրտ ,
Զակն անկըթիթ հարեալ ՚ի բանքո ճըշգրիտ
Քեզ ձօնեացէ զերագընթաց ըզտարիս
Զորս արտօնեաց ցարդ բազմաթիւ ՚ի շարիս .
Տէսցէ անշուշտ թէ աւուրդք պատարուն
Ճախեալք ՚ի քնար և սեղանոյդ ՚ի պաշտօն ,
Յուսումն ՚ի սէրքո սըրիրալի սքանչելեաց
Զըդեալ անքուն մինչ յընդմիջել գիշերաց ,
Զաղեր խոնարհ մէն վայրկենից եգեալ կէս ,
Եւ զհեծութիւն ժամուցն ՚ի քայլս ես ընդ ետ ,
Այսպէս յինէն թուուցեալք ՚ի բաց ոստիցէն ,
Այսպէս թափուր և լոկ զոդիս իմթողցէն
Արպէս այս ամոր յընթացիցն ՚ի սպառուած
Թիւ սոսկ յաւել ՚ի շար աւուրց իմ կենաց :

1 Յովհաննէս Հենրիկոս Վոս (Voss) Գերմա-
նիայի երեկը բանաստեղծներուն ու բանասէր-
ներուն մէկն է , և շատ անուանի է իրեն թարգ-
մանութիւններուն համար որ ըրած է Յունաց և
Լատինացւոց հին բանաստեղծութիւններէն . մէ-
ռաւ 75 տարեկան 1826ին :